Վերապատրաստվող Ուսուցչի
ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Սովորողների մեջ արժեքային համակարգի

ձևավորումը անգլերեն առարկայի դասավանդման ժամանակ

Հետազոտող ուսուցիչ՝Աբոյան Անի

ՀՀ Կոտայքի մարզի Բյուրեղավանի հիմնական դպրոց

Ղեկավար՝Հերմինե Աբրահամյան

Կոտայք 2022

Բովանդակություն

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 3

1. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏ 5

2. ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏ 9

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔ 13

ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ ԵՎ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ 16

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 19

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 21

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թեմայի արդիականությունը: Ներկայումս զգալի փոփոխություններ են տեղի ունեցել արժեքային ուղղվածության, կյանքի հեռանկարների, վերաբերմունքի, մարդկանց, հատկապես դեռահասների, երիտասարդների, երիտասարդության կարիքների մեջ: Մարդու համար առաջադրվել են որակապես նոր պահանջներ ՝ նրա կյանքի ակտիվ դիրքի, իր սուբյեկտիվության, ինքնագիտակցության, ինքնորոշման և ստեղծագործական ինքնակարգավորման ընկալման և մոբիլիզացման համար: Անհրաժեշտ է դարձել փոխել ստեղծագործականորեն զարգացած, պատշաճ կերպով կրթված անձի վերապատրաստման համակարգը, որն ունակ է ակտիվ վերափոխիչ մասնագիտական գործունեության՝ նոր պատմական պայմաններում: Ժամանակակից սոցիալ-տնտեսական և քաղաքական բարեփոխումները, տեղեկատվական տեխնոլոգիաների սրընթաց զարգացումը, մշակութային և սոցիալական արժեքների անհամապատասխանությունը և ժամանակակից այլ իրողություններ իրենց անմիջական ներգործությունն են թողնում ուսումնադաստիարակչական գործընթացի, հետևաբար նաև սովորողների արժեքային կողմնորոշումների համակարգի վրա: Դրանով էլ պայմանավորված է մեր թեմայի արդիականությունը:

Ուսումնադաստիարակչական գործընթացում արժեքային կողմնորոշումների համակարգի վրա բացասական ներգործություն ունեցող գործոնների ուսումնասիրությունը թույլ կտա ավելի շատ ուշադրություն դարձնել դրանց, ապահովել դրանց կարգավորման նոր հնարավորություններ:

Հարց՝

Ինչպե՞ս երեխայի մեջ ձևավորել արժեքային համակարգը անգլերենի առարկայի դասավանդման ժամանակ:

Օտար լեզվի ուսուցման գործընթացում յուրացվում են հետևյալ արժեքները՝

●Գեղագիտական՝ խոսքի գեղեցկության և ներդաշնակության ընկալում, գեղագիտական հույզերի և ապրումների դրսևորում,գեղագիտական ճաշակի ձևավորում,

●Բարոյական՝ մարդկանց և շրջապատող աշխարհի փոխհարաբերությունների, երևույթների ու իրադարձությունների համարժեք ընկալում:

Աշխատանքի օբյեկտն ու առարկան: աշխատանքի օբյեկտն է անգլերեն արական է, իսկ առարկան սովորողների արժեքային կողմնորոշման համակարգն է:

Աշխատանքի նպատակը: աշխատանքի նպատակն է բացահայտել երեխայի մեջ արժեքային համակարգի ձևավորումը անգլերենի առարկայի դասավանդման ժամանակ:

Աշխատանքի **խնդիրներն** են՝

●սահմանել արժեքի գաղափարը,

●ուսումնասիրել արժեքի զարգացման գործընթացը անգլերենի դասին:

Ո՞ր առանցքային կոմպետենցիան է ուղղված նպատակի ուսումնասիրությունը

Սովորել սովորելու կարողունակություն

Իրականացման ժամանակահատվածը

5.09-20.09

Թիրախ խումբը

/ֆանակ, սեռային բաշխում/

20՝ 11աղջիկ, 9տղա

1. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏ
Սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորումը

«Արժեք» հասկացության սույն դիտարկումները ցույց են տալիս, որ դրանցում միավորված են մի քանի նշանակություններ՝

●երևույթների և առարկաների հատկանիշներ, որոնց հիմքում ընկած են գործնական և հուզական հարաբերություններ գնահատվող առարկաների ու երևույթների նկատմամբ,

●բարոյական հասկացությունների բնութագրեր, այդ թվում նաև մարդու հոգեբանական բնութագիրը,

●սոցիալական երևույթների որակումներ, որոնք բնորոշում են մարդկանց միջև առկա հարաբերությունները:

«Արժեք» հասկացության վերոնշյալ մեկնաբանությունները հիմք են տվել գիտնականներին պայմանականորեն առանձնացնելու արժեքների հետևյալ տեսակները՝ նյութական, տնտեսական, սոցիալական, հոգեբանական, բարոյական, գեղագիտական, ճանաչողական և այլ, ըմբռնելու մարդու բնույթն ու էությունը, այն ազդակները, որոնք դրդում են նրան դեպի գիտելիքը և որոշելու նրա իմացական գործունեության շարժիչ ուժերը: Արժեքներն իրենց բնույթով բազմազան, բազմանշանակ են, ինչը թույլ է տալիս համակարգել դրանք՝ ըստ այդ հասկացության տրված մեկնաբանությունների:

Արդի մանկավարժության կարևոր պահանջներից է երեխաների արժեքային համակարգի ձևավորումը: Կրթության նպատակը անհատին ոչ միայն գիտելիքներով զինելն է, այլև նրա մեջ բարոյական որոշակի հատկանիշներ ձևավորելը: Արժեքային կրթությունը ի սկզբանե կրթության անքակտելի բաղադրիչն է եղել: Ինչպես ամբողջ աշխարհում, Հայաստանում էլ այսօր արժեքային կրթությունը հասարակությանը հուզող խնդիրներից մեկն է: Մեզանում արժեքային կրթության նկատմամբ ավանդաբար ընդունված է հետևյալ մոտեցումը. դպրոցն ու ծնողները փորձում են բարոյական ժառանգությունը փոխանցել նոր սերնդին՝նրանց մեջ լավ արժեքներ սերմանելով և հաստատելով բարոյական այլևայլ հատկանիշների ճշմարտացիությունը: Արժեքային կրթության նոր՝արևմտյան

մանկավարժության մեջ մշակված մոտեցման հիմքում մտածական հմտությունների ձևավորման սկզբունքն է:

Ըստ սրա՝ աշակերտներին պետք է օգնել իմաստավորելու որոշակի արժեքներ, այսինքն՝ նրանց պետք է խրախուսել սեփական կենսափորձի և զանազան հարցադրումների միջոցով որոշել, թե իրենք ինչպիսի մարդ են ուզում դառնալ, ինչպիսի ավանդույթներ արժե պահպանել: Անշուշտ այս երկու մոտեցումներն էլ խոցելի կողմեր ունեն: Առաջինը երբեմն զուտ քարոզչական և ձևապաշտական բնույթ է ձեռք բերում: Երեխաները լսում են, թե որքան լավ բան է ազնվությունը, արդարությունը, տարեցների նկատմամբ հոգատարությունը և այլն, սակայն կյանքում տեսնում են արժեքների խախտումն իրենց ուսուցիչների, ծնողների կամ շրջապատողների կողմից: Բնական է, որ այդ դեպքում դրանք վերացական արժեքներ են մնում և նրանց կերպարի մաս չեն դառնում: Մյուս կողմից էլ՝ նոր մոտեցումը շատ ազատական է, և վտանգ կա, որ անձնական ազատ ընտրության և բարոյական ընդունված արժեքների ու պարտավորությունների միջև նախապատվությունը կտրվի առաջինին: Ուստի երեխաների մեջ համապատասխան արժեքներ ձևավորելու համար շատ կարևոր է այս մոտեցումների խելամիտ միահյուսումը: Արժեքները երեխաներին ներկայացվում են առաջին հերթին գրական,պատմական հերոսների օրինակով,նաև ուսուցչի վարքագծով: Ուստի շատ կարևոր է առանձնահատուկ ուշադրություն դարձնել դասագրքերի նյութերին, ինչպես նաև ներկայացված հերոսների վարքագծի վերլուծությանը և դրա միջոցով որոշակի արժեքների բացահայտմանը: Սակայն վերլուծությունը ենթադրում է առաջին հերթին երեխաների գործուն մասնակցություն, այսինքն՝ աշակերտները պետք է հնարավորություն ունենան ազատորեն արտահայտելու իրենց կարծիքը, զգացմունքները, որոշակի հարցադրումներ անելու, ընկերների հետ քննարկելու, դատողություններ անելու հերոսների վարքագծի մասին, գնահատելու և իրենց համար բացահայտելու այս կամ այն արժեքը: Օտար լեզվի ուսուցման ընթացքում կրտսեր դպրոցականների արժեքային կողմնորոշումների ձևավորման բովանդակային բաղադրատարրը բնութագրվում է օտար լեզվի առանձնահատկություններով: Հետազոտվող հիմնախնդրի տեսանկյունից մենք դիտարկում ենք այն արժեքները,որոնք դրսևորվում են՝

●Լեզվի գործառույթներում,

●Տարրական դպրոցում լեզվի ուսուցման նպատակներում:

Ըստ Ս.Տ. Մասլովի՝ շփման ու հաղորդակցման արժեքները վերաբերում են արժեքները վերաբերում են արժեքների սոցիալական խմբին: Քաղաքավարությունն ու բարեկրթությունը՝ որպես արժեքային հասկացություններ, բնութագրում են անձի՝ շրջապատող մարդկանց նկատմամբ հարգալից հարաբերություններ ձևավորելու ձգտումը: Այս հատկանիշը թույլ է տալիս դրանք ներառել բարոյական արժեքների խմբում: Քաղաքավարությունն ու բարեկիրթ վերաբերմունքը դրսևորվում են խոսքային հաղորդակցման մշակույթի, հարգալից դիմելաձևերի, արտահայտչամիջոցների, բառապաշարի գործածման միջոցով: Տեղեկատվական գործառույթի տեսանկյունից լեզուն դիտարկվում է որպես հաղորդման, մարդկության փորձի ու իմացության, գիտակցված գործունեության ընթացքում կուտակված գիտելիքների համակարգման ու լեզվական ձևակերպման միջոց: Այդ գործառույթը մեր կողմից ուսումնասիրվող գործընթացի բովանդակության մեջ բացահայտում է իմացական արժեքները: Գիտելիքը հասարակական փորձով ստուգված՝ իրականության տրամաբանական յուրացման արդյունքն է, որը համարժեք է մարդու գիտակցության մեջ այդ իրականության արտացոլմանը: Ազգային-մշակութային ավանդույթների պահպանման ու փոխանցման գործառույթն իրականացնում է ժամանակների միջև կապը, որը հնարավորություն է ընձեռում լեզվի մեջ պահպանել ազգային մշակույթը և փոխանցել սերնդեսերունդ: Այն դրսևորվում է սոցիալական, իմացական, գեղագիտական արժեքների ձևով: <<Ազգ>> և <<ժողովուրդ>> հասկացությունները դիտարկվում են որպես միասնական, ամբողջական, պատմականորեն ձևավորված էթնիկ հանրություն: Ազգային արժեքներին հաղորդակցվելը նախնիների ավանդույթները պահպանելու, շարունակելու, դրանց հավատարիմ մնալու համոզմունք է, ինչպես նաև սեր հայրենի բնօրրանի հանդեպ: Անձի համակողմանի ու ներդաշնակ ձևավորումն սկսվում է այն ըմբռնումից, որ ազգային մշակույթը ժողովրդի պատմական հիշողության մեջ հազարամյակների ընթացքում խտացած արժեքների շտեմարան է: Ազգային մշակույթն արտացոլում է լեզվի հարստությունը, պատկերավորությունը, արտահայտչականությունը և գեղեցկությունը:

Գեղեցիկը ըստ Ս. Ի. Օժեգովի, մարմնավորում է այն ամենը, ինչը գեղագիտական վայելք է պարգևում: Գեղագիտական օրենքներին համապատասխանությունը դրսևորվում է ներդաշնակության մեջ: Լեզվում ներդաշնակությունն արտահայտվում է գրականության, հատկապես բանահյուսության մեջ: Ծփման գործառույթը ենթադրում է համամարդկային մշակույթի յուրացում՝ հատկապես գեղարվեստական ստեղծագործությունների թարգմանությունների միջոցով: Այն ընդլայնում է արժեքների սահմանները՝ սոցիալական հանուր մարդկության արժեքները, իմացական գիտելիքը որպես համամարդկային մշակույթի արտահայտություն, գեղագիտական գեղեցկությունն ու ներդաշնակությունը, խոսքի գեղագիտությունն ու մշակույթը' որպես արժեք: Հուզական գործառույթը կապված է հույզերի և զգացմունքների արտահայտման հետ: Հուզական ներգործության առավելագույն հնարավորություններով են օժտված գեղարվեստական կերպարները:

Մտքերի ձևակերպման և արտահայտման գործառույթը նշանակում է, որ ցանկացած միտք հնչյունային թաղանթ և արտահայտություն է ստանում: Այս գործառույթի իրականացումը ենթադրում է իմացական մտածողությունը, մտքերը ձևակերպելու և արտահայտելու կարողությունը՝ որպես արժեք և գեղագիտական մտքերի գեղեցիկ և ներդաշնակ ձևակերպումը՝ որպես արժեք, արժեքներին հաղորդակցում: Անձի վարքում դրսևորվող՝ լեզվի կարգավորիչ գործառույթն արտահայտում է նախատեսվող գործողությունների հաջորդական իրականացումը, մարդկային փոխհարաբերությունների, կենցաղի և բարոյական հարաբերությունների կազմակերպումն ու կարգավորումը: Այն նպաստում է բարոյական արժեքների յուրացմանը: Դրանք հատկապես այն արժեքներն են, որոնք վերաբերում են այլ մարդկանց նկատմամբ հարաբերություններին, բարեկիրթ հաղորդակցմանը, վարվելակերպին, հասարակության մեջ վարվելաձևին, խոսքի մշակույթին, իր խոսքի նկատմամբ պատասխանատու վերաբերմունքին: Լեզվի հիշյալ գործառույթների հաշվառումը և տարրական դպրոցում լեզուների ուսուցման գործընթացում էապես կարևորվող արժեքների բացահայտումը դիտարկվում են լեզվական առարկաների ուսուցման նպատակների համատեքստում:

2. ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏ

Տարրական դպրոցում լեզուների ուսուցման կառուցվածքն ու բովանդակությունը միասնական են: Դա թույլ է տալիս եզրակացնել, որ լեզուների ուսուցումն այստեղ ինտեգրվող համակարգ է: Այսպես, օրինակ, օտար լեզվի դասն ինտեգրվում է գեղարվեստական ընթերցանության դասի հետ՝ ուսումնական ձեռնարկներում գեղարվեստական տեքստերի ներմուծմամբ: Գեղարվեստական տեքստերի բովանդակության ներգործությունը կրտսեր դպրոցականի ներաշխարհի վրա պատկերավոր մտածողության և հուզական ընկալման շնորհիվ համարժեք է քերականական առաջադրանքների կատարմանը, մանավանդ որ առաջադրանքները բխում են տեքստերի բովանդակությունից: Ընթերցանության դասերի ընթացքում ձևավորվում են սովորողների լեզվական ճաշակն ու խոսքային մշակույթը: Ստեղծվում է բարձրամշակույթ լեզվական միջավայր:

Ուսուցման մեթոդները ուսումնական նյութի կազմակերպման միջոցներն են, որոնք փոխկապակցված են ուսուցչի և սովորողների գործունեությամբ: Մեթոդը հանդիսանում է կապող օղակ նախատեսված նպատակների և վերջնական արդյունքների միջև: Մեթոդներ ասելով պետք է հասկանալ ուսուցչի և սովորողների փոխհամաձայնեցված գործունեության միջոցները ուսուցման գործընթացում, որոնք ուղղված են սահմանված նպատակներին հասնելուն: Մեթոդների հիմնական բաղադրիչները հանդիսանում են եղանակները: Եղանակ ասելով հասկանում ենք գործունեություն առարկայի հետ, ինչպես նաև բանավոր և գրավոր գործունեություն:

Եթե սովորողները կատարում են իրենց առջև դրված խնդիրը, ապա կարելի է համարել, որ նրանք տիրապետում են ուսումնական աշխատանքի եղանակներին:

Պարզաբանման կամ պատումի եղանակը: Պարզաբանումը պատմության դասավանդման ընթացքում հենվում է փաստերի իմացության, ուշադրության կենտրոնացման վրա:

Ներկայումս յուրաքանչյուր սովորող հետաքրքրված է լեզվի պրակտիկ իմացությամբ: Հաղորդակցվելու ընթացքում սովորողը պետք է

հնարավորություն ունենա ազատ արտահայտել իր մտքերն ու զգացմունքները, չվախենա քննադատվելու կամ սխալվելու վտանգից, լինի բոլորի ուշադրության կենտրոնում:

Աշակերտակենտրոն միջավայրում համագործակցող սովորողները ձեռք են բերում ճանաչողական ակտիվություն: Օտար լեզվի դաս վարող ուսուցիչը պետք է լինի մեթոդապես գրագետ, ժամանակակից տեխնոլոգիաները ազատորեն տիրապետող և կիրառող: Օտար լեզվի ուսուցիչը պետք է կարողանա դասի ընթացքում՝

✔ ապահովել երկխոսության իրավիճակ (քննարկվող նյութի մատչելիություն, հետաքրքրություն, բարյացկամ, հանդուրժող, փոխհամաձայնության, փոխօգնության մթնոլորտ).

✔ ապահովել կոլեկտիվ գործունեություն (անհատական, զույգերով, խմբերով).

✔ խթանել սովորողի հետաքրքրվածությունը իր գործունեության արդյունքով.

✔ ապահովել անձնային կողմնորոշմամբ շփումներ (հաշվի առնելով սովորողի հետաքրքրությունները, անձնական և հոգեբանական առանձնահատկությունները).

✔ սահմանել յուրացվող նյութի խելամիտ ծավալ (ըստ սովորողների տարիքային խմբի և պատրաստվածության):[1]

Սովորողները լեզվի տիրապետման և օգտագործման դասերին տարբերում են բանավոր խոսք կառուցելու, կարդալու, գրելու, ստեղծագործելու, հաղորդակցվելու իրենց ունակություններով, ուստի պետք է ուսուցման գործընթացում կիրառել երեխայակենտրոն մոտեցում այսօր շատ արդյունավետ է համագործակցելով ուսուցանելը: Այս մոտեցման հիմնական գաղափարը սովորողների հետ համատեղ որևէ առաջադրանք իրականացնելու համար հարմար պայմաններ ապահովելն է, ինչը ամրապտնդում է լեզվի տիրապետումը և դրա կիրառումը գործնականում: Համագործակցության ողջ

[1] Т. А. ван Дейк. Язык. Познание. Коммуникация, М., 1989.

գործընթացում պետք է կարևորվեն սովորողի ինքնուրույն ճանաչողական հետաքրքրությունները:

Միջառարկայական կապ ստեղծելու շնորհիվ դասի ընթացքում երեխաների մոտ զարգանում են ճանաչողական ակտիվությունը, երևակայությունը, նրանք սովորում են քննարկումներ, հարցազրույցներ վարել, պնդել իրենց տեսակետը, փաստարկներ բերել: Նմանատիպ առաջադրանքները ստիպում են երեխային հասկանալ, որ խմբի հաջողությունը կամ անհաջողությունը կախված իրենցից յուրաքանչյուրից: Ուսուցչի և սովորողի համատեղ աշխատանքը և ստեղծագործական միջավայրում արարումը տալիս են իրենց առատ պտուղները: Միակողմանի կապը վերածվում է եռակողմանիի. ուսուցիչ-սովորող, սովորող-ուսուցիչ, սովորող-սովորող:

Օտար լեզուների ուսուցման և դրա օգտագործման մեջ մասնագետներն առանձնացնում են հետևյալ ճանաչողական ոճերը.

●դաշտային կամ բնագավառի անկախություն (field independence). դա ենթադրում է անձի՝ մի շարք շեղող գործոններից առարկան առանձնացնելու ունակությունը,

●կիսագնդերից մեկի գերակայություն (leftand rightbrain functioning). երբ գերիշխում է ձախ կիսագունդը, ապա մարդն ունի վերլուծական միտք, մտքերը շարադրում է դեդուկտիվ եղանակով, իսկ աջ կիսագնդի գերակայության ժամանակ մտածելակերպը ինդուկտիվ է[2]:

Ըստ այդմ, ամեն մի սովորող ունի միայն իրեն հատուկ ճանաչողական ոճ, որով և պայմանավորվում է ուսումնառության ոճի և ուսումնական ռազմավարությունների ընտրությունը: Ճանաչողական մոտեցման պարագայում առանցքային նշանակություն ունի ուսուցման և ուսումնառության ռազմավարությունների ընտրության հիմնախնդիրը: Այդ համատեքստում կարևոր է հստակեցնել, թե ռազմավարության ինչ սահմանումներ են համարժեքորեն արտացոլում ուսուցման գործընթացի առանձնահատկությունները:

[2] Brown H. Principles of language learning and teaching. Englewood Cliffs, NJ, 1994, Prentice Hall Regents, p. 104-113.

Լեզուների ուսուցման տեսական հիմքերը մշակելիս գիտնականները կարևորում են Տվան Դեյքի մոտեցումը, որն ստեղծել է խոսույթի մշակման ճանաչողական կաղապարը, որով գիտնականը նկարագրել է տասից ավել բազմամակարդակ ռազմավարություններ՝ թեմայի ներմուծման, հասկանալու, մտածողության, խոսույթի, խոսույթի սերման և այլն[3]:

Ըստ այդմ, ամեն մի սովորող ունի միայն իրեն հատուկ ճանաչողական ոճ, որով և պայմանավորվում է ուսումնառության ոճի և ուսումնական ռազմավարությունների ընտրությունը: Ճանաչողական մոտեցման պարագայում առանցքային նշանակություն ունի ուսուցման և ուսումնառության ռազմավարությունների ընտրության հիմնախնդիրը: Այդ համատեքստում կարևոր է հստակեցնել, թե ռազմավարության ինչ սահմանումներ են համարժեքորեն արտացոլում ուսուցման գործընթացի առանձնահատկությունները:

Ընդհանուր առմամբ, ճանաչողական հաղորդակցական մոտեցումը ձևավորվել է հումանիստականի շրջանակում, որը, ինչպես հայտնի է, նպաստեց անձնակենտրոն, անձնակողմնորոշիչ, անձնուղղորդ մանկավարժական տարբեր տեխնոլոգիաների ներդրմանը: Այսպես, Ք. Ռոջերսը առաջադրեց այն դրույթը, ըստ որի, մարդը նախ և առաջ զգայական էակ է[4]: Ք. Ռոջերսի և նրա համախոհների հայեցակարգերը նպաստեցին հաղորդակցական մոտեցման այն սկզբունքի ձևավորմանը, ըստ որի՝ անհրաժեշտ է հաշվի առնել սովորողների ուսուցման դրական զգայական մթնոլորտի ստեղծման պայմանները և գործոնները: Ակնհայտ է, որ ուսուցման դրական զգայական մթնոլորտը անհրաժեշտ նախապայման է գիտելիքների արդյունավետ ներմուծման, յուրացման և ամրապնդման համար:

[3] Т. А. ван Дейк. Язык. Познание. Коммуникация, М., 1989, с. 312.

[4] Rogers C. Personal thoughts on Teaching and Learning, Merrill-Palmer Quart, 1957, b. V, 3 (Summer), p. 241-243.

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔ

Լեզվական իմացությունը ենթադրում է լեզվի համակարգի, քերականական նյութի տիրապետում: Ուսումնառության տարիներին երեխաներն արդեն գործնականում տիրապետում են լեզվին: Լեզվական իմացությունը նշանակում է տվյալ լեզվի բառապաշարի, լեզվական և դարձվածքային միավորների իմացություն, բառակազմական ձևաբանական, շարահյուսական, ոճական, գրականագիտական գիտելիքների ձեռքբերում, լեզվի քերականության յուրացում, գեղարվեստական տեքստերի վերլուծություն: Ուղղագրական – ուղղախոսական բանիմացությունը ուղղագրական նորմերի համակարգի վերաբերյալ գիտելիքն է, ուղղագրական – ուղղախոսական կանոնների և նորմերի յուրացումը, որն ապահովվում է ուղղագրական գրագիտության բարձր մակարդակը: Լեզվաբանական իրազեկությունը ներառում է լեզվաբանության հիմունքների վերաբերյալ գիտելիքները, լեզվաբանական հասկացությունների յուրացումը, ճիշտ և տեղին գործածությունը: Հաղորդակցական իրազեկությունը ենթադրում է խոսքային գործունեության բոլոր տեսակների, հաղորդակցական մշակույթի տիրապետում: Օտար լեզվի ուսուցման նպատակների այսօրինակ դիտարկումն ուղղված է առաջին հերթին ուսումնական տվյալ բնագավառին ներհատուկ գիտելիքների, կարողությունների, հմտությունների յուրացմանը, հետևաբար չի կարող լիարժեքորեն լուծել կրտսեր դպրոցականների զարգացման և արժեքային համակարգի ձևավորման բոլոր խնդիրները: Կ.Դ.Ուշինսկին, որպես լեզվի ուսուցման առաջնային նպատակ, դիտարկել է երեխայի անձի զարգացումն ու դաստիարակումը, օտար լեզվի նկատմամբ սիրո և հետաքրքրության ձևավորումը, խոսքի մշակույթի զարգացումը, հատկապես օտարի զգացողությունը:[5]

Օտար լեզվի ուսուցման գործընթացում յուրացվում են հետևյալ արժեքները՝

Գեղագիտական՝ խոսքի գեղեցկության և ներդաշնակության ընկալում,գեղագիտական հույզերի և ապրումների դրսևորում, գեղագիտական ճաշակի ձևավորում,

[5] Т. А. ван Дейк. Язык. Познание. Коммуникация, М., 1989.

Բարոյական՝ մարդկանց և շրջապատող աշխարհի փոխհարաբերությունների, երևույթների ու իրադարձությունների համարժեք ընկալում:

Թեստային աշխատանքը համարվում է իդիալական միջոց դասի նյութը տեղ հասցնելու համար: Այն կարող է բաղկացած լինել մեկ կամ մի քանի առաջադրանքներից, որոնք էլ իրենց հերթին տարբեր հարցերից ու կետերից: Յուրաքանչյուր կետ ըստ էության բացահայտում է տվյալ առաջադրանքը կատարողի ունակություններն ու և տարբերակում աշակերտներին ըստ գիտելիքների և կոմպետենցիայի: Թեսթային ստուգումն ունի մի շարք առավելություններ՝

●հնարավորություն է տալիս ուսուցչին փոքր բաժիններով ստուգել մեծածավալ

●ուսումնական նյութը,

●արագ գնահատել սովորողների ուսումնական նյութի յուրացման աստիճանը,

●նվազեցնում է սուբյեկտիվիզմի աստիճանը:

Հաղորդակցման գործունեության տարբեր տեսակներին վերաբերող թեսթերը նպաստում են ընդհանուր խոսքային կոմպետենցիաների զարգացմանը, ընդլայնում՝

●աշակերտի մտահորիզոնը, օգնում՝ հաղորդակցական և հանրամշակութային կոմպետենցիաների ձևավորմանը:

Օտար լեզվի թեսթ կազմելիս պետք է հաշվի առնել հետևյալը.

●ընդգրկել խոսքային գործունեության բոլոր տեսակները,

●ներկայացնել յուրաքանչյուր խոսքային գործունեության գնահատման համար, չափման առանձին բնութագրիչներ,

●ապահովել հաղորդակցական ուղղվածություն,

●հիշել, որ քերականությունը միջոց է, ոչ թե նպատակ,

●ընտրել հետաքրքիր, մոտիվացնող, ներգրավող առաջադրանքներ,

●ներմուծել երկրագիտական և հանրամշակութային գիտելիքներ,

●օգտագործել տեխնիկական միջոցներ:

●հնարավորություն է տալիս ուսուցչին փոքր չափաբաժիններով ստուգել մեծածավալ ուսումնական նյութը,

●արագ գնահատել մեծ թվով սովորողների ուսումնական նյութի յուրացման աստիճանը,

●նվազեցնում է սուբյեկտիվ գործոնի աստիճանը:

Թեստավորման նպատակն էր.

●որոշել սովորողների ռեցեպտիվ խոսքային կոմպետենցիայի մակարդակը,

●ի հայտ բերել հաղորդակցման գործառույթի համար անհրաժեշտ գիտելիքների մակարդակը (բառապաշար, քերականական կառուցվածքների իմացություն և այլն),

●բացահայտել այն գործոններն ու դժվարությունները, որոնք խոչընդոտում են ընթերցանական և ունկնդրման կոմպետենցիայի ձևավորմանն ու դրանց հետագա զարգացմանն ավագ դպրոցում:

Փորձարարական թեստավորման նյութերը կազմվել են 9 – րդ դասարանի անգլերեն լեզվի գիտելիքի պահանջներին համապատասխան՝ գործածելով հանրակրթական դպրոցի անգլերեն լեզվի դասագիրքը :

Դասի պլանավորում

Բուն դասը-ընթացքը բաժանում են հետևյալ փուլերի՝

1. Խթանման փուլ,
2. Իմաստի ընկալման փուլ,
3. Կշռադատման փուլ(ԽԻԿ):

Խթանման փուլի հիմնական նպատակներն են՝

1. նախապատրաստել սովորողներին նոր դասի ընկալմանը, որը կարելի է կատարել նախորդ դասի հարցման, ամփոփման միջոցով,
2. բացահայտել նոր նյութի վերաբերյալ սովորողների գիտելիքները,
3. ակտիվացնել աշակերտներին՝ ներգրավվելով նրանց քննարկվելիք նյութի մեջ,
4. աշակերտների մոտ ձևավորել գիտելիքներ և հմտություններ ձեռք բերելու ձգտում:

ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ ԵՎ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Թեստավորման ընթացքում բոլոր մասնակիցների համար ապահովվել են հավասար պայմաններ:

Ստորև ներկայացվում է աշակերտներին տրված թեստային առաջադրանքների փաթեթը:

Conversation making (երկխոսության կազմում)

Երկխոսության կազմման մեթոդը թույլ է տալիս աշակերտներին գործածել իրենց ակտիվ բառարանը և, գործածելով նոր բացատրված ժամանակաձևը, ամրապնդել այն: Ուսուցիչը պետք է ընտրի երկխոսության թեման՝ ելնելով աշակերտների բառապաշարից: Թեման պետք է համապատասխանի աշակերտների հետաքրքրությանը, հակառակ դեպքում նրանք շուտ կձանձրանան և մեթոդիկայի կիրառումը օգտակար չի լինի: Առաջարկվում է երկխոսության կազմման համար կիրառել վարժությունում առաջ բերված հարցերը:

Բառապաշարի և քերականական կոմպետենցիայի ստումանը ուղղված զուգակցված թեսթ:

Task 1. Make conversation using one of the following questions.

Կազմիր երկխոսություն՝ կիրառելով հետևյալ հարցերից որևէ մեկը:

1. **Who did you meet last week? What did you do together?**
2. **Tell me about what you did for the last 24 hours.**
3. **When was the last time you were really excited about something?**
4. **Tell me about where you lived as a child.**
5. **When was the last time you went to an amusement park? How was it?**

Game-crossword (Խաղ-խաչբառ)

Խաղերը՝ առավելապես սովորեցնող, զարգացնող և գիտելիքը ամրապնդողները, ունեն անսահմանափակ հնարավորություններ, որոնք կարևոր է գործածել ուսուցանման գործընթացում: Դրանք օգնում են աշակերտներին բացահայտել իրենց կոմպետենցիաները և գիտելիքը՝ այն ամենն, ինչ նրանք սերտել են և ինչ կարող են անել տվյալ դասընթացի շրջանակներում: Խաղը առաջարկում է լուծման որոնում՝ ինչպե՞ս վարվել, ինչպե՞ս ասել և, վերջապես, ինչպե՞ս հաղթել: Այս խնդիրների լուծման և

հաղթանակին հասնելու ցանկությունը աշակերտի մոտ զարգացնում է մտածելու ունակությունը: Խաղի մի տեսակ է խաչբառի լուծումը: Այն կիրառվում է տարբեր դասարանների աշակերտների համար՝ ցածր դասարաններում հարցադրումները հիմնականում կատարվում են մայրենի լեզվով, իսկ բարձրերում՝ անգլերեն:

Task 4. All the words below are past tense verbs. Can you finish the crossword?

Ներքևում բոլոր բառերը անցյալ ժամանակի բայեր են: Կարո՞ղ ես ավարտել խաչբառը:

Across

1 The weather was great! The sun ***** all day.

3 I *** $10,000 in the Jumbo Lottery!

4 I *** breakfast very early today.

5 My new suit **** $300.

7 When I was a kid, I often ****** with my brother.

8 I **** British Airways to America last year.

11 Susie *** up very late last weekend.

12 I ********** the question.

16 Tom **** four books last month

17 Andrew **** in the sea yesterday.

18 I dropped my Walkman, and it *****.



Down

1 I ***** to an American for the first time.

2 Jill threw the ball, and I ******* it.

3 My mother **** shopping yesterday.

6 I ****** some fruit at the supermarket.

9 James **** up at 9:00.

10 I ***** ten Pounds in the street.

13 He ***** to work in his new car.

14 I *** a good movie last weekend.

15 My boss ***** too much at the office party

Sentence transformation (նախադասության վերակզմում)

Նախադասության վերակազմման մեթոդիկայի կիրառման դեպքում աշակերտը գործ ունի երկու տեսակի նյութի հետ՝ առաջինը՝ իր կողմից արդեն սերտած, երկրորդ՝ նոր ամրապնդվող նյութ: Ժամանակաձևերի ուսուցանման դեպքում տվյալ մեթոդիկայի կիրառումը թույլ է տալիս աշակերտին վերհիշել նախորդ ժամանակաձևը և դրա հիման վրա կազմել նորը: Վարժությունը կարող է ենթադրել ոչ միայն բայի ժամանակաձևի փոփոխություն, այլ նաև ժամանակի մակբայի փոփոխությունն ըստ համատեքստի: Նախադասության վերակազմման մեթոդիկայի կիրառման մեկ այլ ձև է հաստատական նախադասությունների վերածումը հարցականի և ժխտականի:

Task 5. Change the following sentences in Present Indefinite into Past Indefinite.

Ներկա անորոշով տրված նախադասությունները փոխիր անցյալ անորոշի:

1. What strikes me is the generosity of the offer.
2. He sows the seeds of dissension.
3. She leaves her things on the table.
4. They all tell the same story.
5. People mistake him for an American.

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսօր օտար լեզուների դասավանդումը նպատակաուղղված է սովորողների լեզվահաղորդակցական կոմպետենցիաի զարգացմանը, նրանց՝ լեզվակրթության ընթացքում առկա դժվարությունները ինքնուրույնաբար հաղթահարելու հմտությունների ձևավորմանը, ինչպես նաև խոսքային կարողությունների զարգացմանը նպատակաուղղված առավել փոխներգործուն մեթոդների ու ռազմավարությունների յուրացմանը: Միաժամանակ, օտար լեզուների ուսուցումը կոչված է էլ ավելի ընդլայնել սովորողների հաղորդակցական մշակույթն ու համագործակցելու կարողությունները, որոնք դյուրացնում են նրանց մուտքը համաշխարհային հանրություն և արդյունավետ գործելու հնարավորություններ ընձեռում:

Ներկայումս հաշվի առնելով ժամանակակից մարտահրավերները՝ խնդիր է դրվում՝ բարձրացնել անհատի փորձն ու հմտությունները օտար լեզուն միջմշակութային հաղորդակցության մեջ կիրառելու նպատակով, մյուս կողմից՝ լեզվական կարողությունները կարիք ունեն լրացվելու արժեհամակարգային կոմպետենցիայով՝ երաշխավորելով հաջողակ հաղորդակցություն: արժեքները գործում են որպես հասարակության անդամ հանդիսացող անհատների սոցիալական ներգրավվածությունն ապահովող կայմեր:

Ուսումնասիրելով ՀՀ հանրակրթական դպրոցի աշակերտների արժեհամակարգի զարգացման հնարավորությունները անգլերենի ուսուցման գործընթացում երգի՝ որպես մեթոդի կիրառմամբ, եկանք այն եզրակացության որ՝

- Օտար լեզվի դասավանդման շրջանակներում կարևորվում է անդրադարձը արժեհամակարգի զարգացման անհրաժեշտությանը, քանի որ ներկայումս լեզվակրթության բնագավառը շեշտադրում է աշակերտի՝ բազմալեզու հաղորդակցության ժամանակ ակտիվ սոցիալական դերակատարումը արժեքների փոխանցման նպատակով:
- Երգերը կարող են ոչ միայն խթանել աշակերտների լեզվական կարողությունների զարգացմանը, այլ նաև պայմանավորված իրենց բնորոշ հոգեբանական ազդեցություններով երգերը կարող են նպաստել արժեքների

ուղղակիորեն զարգացմանը, քանի որ յուրաքանչյուր արժեքի ընկալման գործընթաց զուգորդվում է զգացմունքների և ապրումների որոշակի շղթայով, որոնց շնորհիվ անհատը կարողանում է սահմանել տվյալ արժեքների կարևորություն ու դերը իր կյանքում:

- ՀՀ հանրակրթական դպրոցի ուսուցիչների հարցման արդյունքները
- փաստեցին նրանց կողմից երգի մեթոդի հաճախակի կիրառման և մեթոդի նկատմամբ դրական տրամադրվածության մասին, այն ուսուցիչների կողմից մեծամասամբ կիրառվում է աշակերտների լեզվական կարողությունների զարգացման նկատառումներով, սակայն արժեքային բաղադրիչը ևս չի անտեսվում:
- Օտար լեզվի առարկայական ծրագրում արժեքների ձևավորումը հստակորեն շեշտադրված է՝ ընգրկելով համամարդկային, մարդասիրական, մշակութային, գեղագիտական, սոցիալական, էկոլոգիական կարևորագույն արժեքներ: Չափորոշչում երգի մեթոդի կիրառությունն ընդգրկում է 3-6-րդ դասարանները:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Brown H. Principles of language learning and teaching. Englewood Cliffs, NJ, 1994, Prentice Hall Regents.

2. Т. А. ван Дейк. Язык. Познание. Коммуникация, М., 1989.

3. Bruner J. S., Goodnow J. J. and Austin G. A. A Study of Thinking. Transaction Publishers, 1995. .

4. Кубрякова Е. С. Об установках когнитивной науки и актуальных проблемах когнитивной лингвистики (Известия АН. Серия литературы и языка, 2004, т. 63, N 3.

5. Rogers C. Personal thoughts on Teaching and Learning, MerrillPalmer Quart, 1957, b. V, 3 (Summer).

6. КолесниковаИ.Л., ДолгинаО.А.,Англорусский терминологический справочник по методике преподавания иностранных языков, СПб.: Издво «РусскоБалтийский информационный центр „БЛИЦ"», «Cambridge University Press», 2001 г.

7. Երզնկյան Ե. (գլխ. խմբ.), Օտար լեզուները Հայաստանում. Գիտամեթոդական հանդես,ՀՀ Կրթության և գիտության նախարարություն, Կրթության ազգային ինստիտուտ, 20082014թթ.:

8. PāzārgādiA., Fārsi āsān (Easy Persian), Rāhnamā Press, Tehran, 2011, Books 15.

9. Աստվածատրյան Մ. Գ., Օտար լեզուների դասավանդման մեթոդիկա, «Լույս», Երևան, 1985թ., 389 էջ https://funnyenglishforyou.wordpress.com/2014/09/15/2352/